տեսքերի 28-ին աշխատանքից հեռացվում է ֆրանսիացի փոքր թղթաշենը և ապա նոյեմբերին՝ մեծը։

Այնուհետև գործարանի ղեկավարությունը անցնում է առաջին հայ թղթագործ վարպետ Նիկողայոսին, որը սովորել էր պարսիկ թղթագործների մոտ և ճարպկորեն յուրացրել ֆրանսիացի վարպետների հմտությունը։ Սրա մասին 1777 թ. ծախսերի մատյանում արձանագրված է «յապրիլի 21. օրն ուրբաթ, նոր վարպետ Նիկողայոսն սկսաւ ծեծել զնիւթ թղթոյն բաշխիչ ետու երկու հազար դիան»։ Մյուս աշակերտի՝ Մարգարի մասին հետագայում գրանցումներ չկան։

3. ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Թղթաշինության երկու գործարանի կառուցման և կահավորման վրա ծախսված է մոտ 18000 ղուռուշ՝ չհաշված վարպետների, բանվորների և այլոց սննդի վրա կատարված ծախսերը։ Այս գումարը հսկայական մի գումար է, եթե նկատի ունենանք իր ժամանակի արժեքը։ Ավելորդ չենք համարում՝ հավեժատության համար բերել նույն թղթագործարանի ելքի մատյանի հետևյալ գրանցումները «Գումեշ մի առի որում ետու 15 հազար դիան. (=22 ղուռուշ 20 փարա)[1]». կամ Դաւիթ վարդապետն և թարգիման Ստեփանն զձիանքն իւրանց զողանալ ետուն ի յԱլիքուշակ գեօղն, որոց երեսն պարզ լինի. դինն է 90 ղուռուշ». և կամ «Աշչի Դալուստին մէկ բոլոր տարվա տօնլուղն ետու ի լրանալ տարւոյն... 24 ղուռուշ»։

Թղթաշինության գործարանի կառուցման և գործիքավորման համար աշխատել են.—

ա) Բարհատներ 1235 մարդ օր, օրական՝ 20-25 փարայով.

բ) Խառատներ 279 մարդ օր, օրական՝ 12-15 փարայով.

գ) Դարբիններին տրված է 1232 ղուռուշ, օրավարձը՝ 25 փարայով։

դ) Մշակներ 4217 մարդ օր, օրական՝ 6 փարայով.

ե) Որմնադիր բանվորներ («բանահ») 318 մարդ օր, օրական ստացել են 15 փարա. և այլն։

4. ԹՂԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Թղթագործարանի ծախսերի մատյանից երևում է, որ նրա գործիքները պատրաստվել են փայտից, քարից և զանազան մետաղներից։

ՓԱՅՏՅԱ ԳՈՐԾԻՔՆԵՐ.—Ամենից առաջ արժանի է ուշադրության փայտյա «մանկեանան» կամ մամլիչը. այս մամլիչը նման է եղել մինչև վերջին ժամանակները Հայաստանի ձիթհանքերում օգտագործվող սեղմիչներին. նրա բաղկացուցիչ մասերն են ա) 12-15 մետր երկարությամբ հաստ գերաններ, որոնց թիվը կարող է լինել երկու կամ չորս բ) «արջ», գ) «պողոսիկ» (բուրղու), դ) «կախքար»։

Մանկյանան կամ մամլիչը կառուցված է հետևյալ ձևով.—գերանների մի ծայրը գետնից քառորդ մետր բարձրության վրա, տեղավորվում է պատի մեջ հատուկ պատրաստված անցքում, որը վերին կողմից բռնված է մինչև 50 տոնն ծանրության քարերով, գերանների մյուս ծայրին ամրացվում է (վերին կողմից) «արջ» կոչվող կոճղը, որը մեջտեղում ունի մոտ երեք դեցիմետր տրամագծով անցք առ և ակոսներով. այս անցքի մեջ տեղավորվում է նույն տրամագծի, դարձյալ առ և ակոսներով «պողոսիկը» (մոտ 5—6 մետր երկարությամբ գերան). պողոսիկի ներքին ծայրում ամրացված է մինչև մեկ տոնն ծանրության «կախքարը», որը ձևով նման է աղացի քարին։

Մանկյանան գործի գցելու համար պողոսիկը կախքարի հետ միասին պատեցվում է ձախ և «արջի» օժանդակությամբ գերանները բարձրացնում են վերև. գերանների տակ՝ նրանց հիմքին մոտիկ, տեղավորվում է մամլվող նյութը և ապա պողոսիկն աջ պտտեցնելով, գերանները իջեցվում են մինչև այն աստիճան, որ նրանք հենվեն մամլվող նյութին. այնուհետև պողոսիկը կախքարի հետ միասին բարձրանում և կախվում է օդի մեջ և իր ամբողջ

[1]) Ծանոթ 40 փարան հավասար է մեկ ղուռուշի։